

Թարգմանչական ճիւղի մէջ, նրա աստիճանական զարգացումը եւ միջազայրի պահանջը չեն, որ դեր են կատարել, որովհետեւ այդ հանգամանքները, մեղմ լինելու գործ ածելով, պիտի ասենք, համարեայ գոյութիւն չունենն:

(Հար...նախէն)

Յ. ՍԱՂԱԹՆԷԱՆ



ՍՈՒՐԻՍԱԹԵԱՆ; Գրական Գոհարներ, Թիֆլիս 1922:

Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան գրական հրատարակութիւնների մէջ առաջնակարգ տեղ է գրաւում Սուրիսաթեանի «Գրական Գոհարներ»-ը, որ գալիս է լրացնելու մի կարեւոր պահաս հայ գրական ասպարիզում:

734 մեծադիր էջից բաղկացած գրական-գեղարուեստական ստուար մի ժողովածու է «Գրական Գոհարներ»-ը, որի հրատարակութիւնը պատիւ է բերում Խորհրդային կուսակարութեան:

Այդպիսի մեթոդով ու սիստեմով կազմուած գրական մի ձեռնարկի կարիքը հայ գրական եւ նա մանաւանդ դպրոցական ասպարիզում վաղուց զգացուում էր: Այդ կարիքը զգացել ենք մենք՝ երբ Նոր-Ջուղայի Ազգ. երկսեռ դպրոցներում վեց տարի շարունակ աւանդել ենք հայերէն լինու եւ գրականութիւն:

Համարձակ կարելի է ասել, որ մեր դպրոցական ասպարիզում մինչեւ օրս չունինք նման մի աշխատութիւն: Ճիշդ է, որ հրատարակի վրայ գոյութիւն ունին Ղազարոս Աղայեանի, Աւետիս Ահարոնեանի, Յովհաննէս Թումանեանի եւ Արթուրէս Փափազեանի կազմած «Հայ գրողները» եւ Համարձում Առաքելեանի «Չեռնարկ բանահիւսութեանը», բայց նրանք լինելով անկատար, պակասատար եւ միակողմանի, չեն կարողանում բաւարարութիւն տալ ուսուցիչների եւ աշակերտների պահանջներին: Նրանց մէջ չկայ աւանդելիք նիւթերի սիստեմ, համապատասխան դասաւորութիւն, որոշ մեթոդ. բացակայում է հեղինակների ստեղծագործութիւնների վերլուծութիւնը, այլ եւ նրանց կեանքի բնորոշումը, իրենց հիմնական գծերով:

Այս պակասը գալիս է լրացնելու «Գրական Գոհարները», որ բարեխիղճ ու սիստեմատիկ դասաւորութեամբ ամփոփուած են հայ գրականութեան թանկագին գոհարները, սկսած

հնագոյն, անգիր ժամանակների ստեղծագործութիւնից, մինչեւ մեր օրերը: Ուրիշ խօսքով հեթանոսական, միջնադարեան եւ նորագոյն ամբողջ հայ գրականութեան լաւագոյն նմոյշները ամփոփուած են գրքի մէջ:

Այս տեսակէտից «Գրական Գոհարներ»-ը առաջնակարգ եւ պատուաւոր տեղ է բռնելու մեր միջնակարգ դպրոցների բասագրքերի մէջ:

Բայց Գրական Գոհարներ»-ի նշանակութիւնը միայն մանկավարժական արժանիքի մէջ չէ կայանում: Այնտեղ առանձին խնամքով ամփոփուած են մեր գրականութեան ամենաթանկագին գոհարները, որոնք գրական-գեղարուեստական արժէք ունին եւ կարող են միջազային գրականութեան մէջ տեղ գրաւել: Շուրջի/ըմի կամ ակնդէնչիայ՝ տարրեր պարունակող նի. թերը մուտք չեն գտած գրքում: Այնտեղ մեր գրականութիւնը զտուած է, բիւրեղացած եւ առնուած է մի գեղեցիկ շրջանակի մէջ, մի հանդամուք, որ աւելի բարձրացնում է գրքի արժէքը:

Գիրքը կարելի արժէք ունի նաեւ հասարակական զարգացման, դաստիարակութեան տեսակէտից: Այնտեղ նի թերը իրենց բովանդակութեան համաձայն դասաւորուած են ըստ գրական տեսակների կամ ձեւերի: Այնուհետեւ հեղինակները բնորոշում են իրենց հոգեբանութեամբ եւ իշխող տրամադրութեամբ: Բացի այդ՝ ցայտուն գոյներով ցոլանում են դարաշրջանները իրենց հասարակական եւ սոցիալական ալեկոծ երեւոյթներով, այլ եւ զանազան դասակարգերի ու սերունդների կեանքը, իրենց ընտանեկան եւ հասարակական կեանքի տարբեր կողմերով, տիրող դասակարգերի ձգտումները, մեծութիւնը, փառքը, բարքերի կոպտութիւնը եւ դրանց հետեւանքով առաջացած դրամաները, փոթորիկները, ալեկոծումները — բոլորն էլ անգրադառնում են «Գրական Գոհարներ»-ի մէջ: Նրա մէջ խորացող ուշագիր ընթերցողը իր մտաւոր զարգացման համար ահագին նիւթ կարող է գտնել:

Այս մի չորրորդ հանգամանք եւս: Մեր գրական եւ հասարակական կեանքի զարգացման համար անհրաժեշտ է ոչ միայն հայ գրականութեան, այլ եւ միջազգային կեանքի ու գրականութեան ծանօթութիւնը: Այս տեսակէտից մեզանում մինչեւ օրս ուշագրաւ գործ չէ կատարուած: Սուրիսաթեանի «Գրական Գոհարներ»-ի մէջ շեշտուում է այդ հանգամանքը: Այնտեղ Սուրիսաթեան տալիս է մեզ հին յու-

նական, պարսկական, վրացական եւ անգլիական գրականութեան ամենաընտիր նմուշները: Այնտեղ են միջազգային գրականութեան մտքի տիտանները — Հոմերոս, Արիստոտէլ, Ֆիրդուսի, Շոթա Ռուսթավէլի, Շէքսպիր եւ ուրիշներ:

Բովանդակութեան կողմից « Գրական Գոհարներ »-ը հարուստ է: Այնտեղ խտացած են հայ գրականութեան երեք խոշոր ու հիմնական տեսակները — Էպոս, Քնարերգութիւն եւ Գրամա:

Էպոսի մէջ մտնում է ժողովրդական բանահիւսութիւնն իր բոլոր ճիւղերով. — դիցաբանական երգ, առասպել, զրոյց, գուսանական զրոյց, հէքիաթ, ժողովրդական քնարերգութիւն — սիրոյ, տշխատանքի, բնութեան, պանդխտի, օրօրոցի, հարսանեկան երգեր, մահերգ եւ խառն մօտիւններ: Այս բոլորը կազմում են գրքի առաջին բաժինը:

Երկրորդ բաժինն սկսում է իսկական էպոսով, որի մէջ մտնում են Սասունցի Գաւիթ եւ Մհեր (իր բոլոր վարիանտներով), Մուրոմցի Իլիան (Թարգմ. Յովհ. Թումանեանի), այլ եւ հատուածներ Ֆիրդուսու Շահ-Նամէից, Հոմերոսի Իլիականից, Ալիբաբայի Էնէականից, Շոթա Ռուսթավէլու Ընձենաւորից եւ Արսէն Բագրատունու Հայկ դիւցազնից: Նշն բաժնի մէջ զետեղուած է նաեւ վիպերգը իր ամենաթանկագին նմուշներով — Անշշ՝ Յովհ. Թումանեանի, Դեւ՝ Սաբաթեանի, Աբու Լալա Մահարի՝ Աւետիս Իսահակեանի, Նոր Առաւօտ, Հարձը, Ամբոխները խելագարուած, Ամենագօէմ՝ Եղիշէ Չարենցի: Այնուհետեւ գալիս է բալլադը, հէքիաթը, հովուերգութիւնը եւ երգիծարանութիւնը:

Երրորդ բաժինը պարունակում է իր մէջ Քնարերգութիւնը միջնադարեան տաղերգութիւնների, աշուղների, արեւելաշայ եւ արեւմտահայ նորագոյն բանաստեղծների, այլ եւ օտար պօէտների ամենաընտիր ստեղծագործութիւնները: Նշն բաժնում է զետեղուած նաեւ արձակ բանաստեղծութիւնը — Մաքսիմ Գորկուց, Տուրգենեւից (Թարգմ. Գ. Մելոյեանի) եւ Բողերից (Թարգմ. Վահ. Տէրեանի):

Չորրորդ բաժինն ընդգրկում է Գրաման, իր մի քանի ճիւղերով — գրամա եւ ողբերգութիւն, կատակերգութիւն՝ Սուրխաթեանի: Ամբողջական յօդուածներ կան Սոփոկլէսից, Անտիգոնէից (Թարգմ. Տ. Յովհաննէսեանի), Ալիլիամ Շէքսպիրից՝ Համլետ, Պէպոից եւ Հին աստուածներից:

Հինգերորդ բաժնի մէջ մտնում են զա-

նաղան յօդուածներ, այսպէս 1. Մտածութեան արուեստի մասին՝ Օգիւստ Ռոդենի, 2. Արխատոսը ողբերգութեան մասին, 3. Ողբերգութեան ծագումը եւ հին յունական թատրոնը Սուրխաթեանի, 4. Միջնադարեան գրամա՝ Պ. Ժ. Ի, 5. Շէքսպիրեան թատրոն՝ Սուրխաթեանի, 6. Համլէտի ցուցմունքները դերասաններին՝ Շէքսպիրի, 7. Սկանակ գրողներին՝ Ա. Չեխովի, 8. Թափառիկ սիւսթէներ՝ Ս. Արաշերի (Թարգմ. Յ. Մելոյեանի): Այս նիւթերը կարգ են նպաստել ընթերցողների ընդհանուր զարգացմանը:

Գրքի 727^{րդ} էրեսում գրուած են տաղաչափութեան ու ոճաբանութեան էջերը, իսկ վերջում զետեղուած է օտարադպի ու գրարար բառերի բառարանը:

Գիրքը վերջանում է նիւթերի լիակատար ցանկով:

« Գրական Գոհարներ »-ը սակայն չէ մի քանի մանր թերութիւններ: Առհասարակ նկատուում է, որ գրական տեսակների մասին պատրաստուած ուսումնասիրութիւնները կատարուած են հապճեպով: Շատերի վրայով Սուրխաթեան անցնում է համաօտակի ընդգծումներով, յաճախ 6—30 տողով: Այդպէս է օրինակ երգիծարանութիւնը, իրիւրը, բալլադը: Երգիծարանութեան մէջ բացակայում են սատիրայի (իստ երգիծարանութեան), սարկազմի, մեղմ սատիրայի եւ հիւմորի բացատրութիւնները, ինչպէս նաեւ երգիծարանութեան ծագման եւ զարգացման պատմութիւնը: Նշնպէս պակասաւոր է իրիւրի ծագման եւ սատիրանական զարգացման պատմութիւնը: Նշնը կարող ենք ասել էլէգիայի, տրագիդիայի եւ ուրիշների մասին:

Գրական Գոհարների նման մի լուրջ ձեռնարկի մէջ անհրաժեշտ է, որ լրացուին այս պակասները:

Այդ թերութիւններով հանդերձ սակայն՝ Գրական Գոհարները բարեխիղճ աշխատանքով կազմուած լուրջ մի ձեռնարկ է, եւ մինչեւ օրս հրատարակուած գրական ժողովածուների մէջ առաջնակարգ տեղ է գրաւում: Այնտեղ ընթերցողը գտնուէ է հայ եւ օտար գրականութեան ամենաթանկագին կտորները, որոնց մէջ անդրադառնում են դարաշրջանները, իրենց գրական հոսանքներով, սերունդները իրենց յոյզերով ու տենչերով եւ դասակարգերը իրենց սոցիալական ընդհանրումներով:

Այդ նիւթերը խիստ կարեւոր արժէք ունին հայ ժողովրդի, աշակերտների եւ գրականութեամբ զբաղողոյնների ընդհանուր զարգացման եւ դաստիարակութեան համար:

Սուրբսաթեան մի անգին ծառայութիւն է մատուցանում իր «Գրական Գոհարներ, ով մեր ժողովրդին եւ գրականութեան»:

Այդ տեսակէտից սրտանց ողջունում ենք «Գրական Գոհարներ, ի երեւոյթը մեր մէջ»:

Վիեննա: ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ



ԼՐԱԿԱՏՈՐ ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԷՆ ԼՐԱԳԻՐՆԵՐՈՒ

ՈՐՈՆՔ ԿԸ ԳՏՆՈՒՒՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ՄԷՋ Ի ՎԵՆՆԱ

1794—1921

(Հարանգիւնքն էւ վերջը):

- ՔԱՂԱՔԱՑԻ. Շաբաթաթերթ, Գրեզնո 1902 - 1909 (Ա.—Է. տարի). կը շարունակուի «Նոր Սերունդ-Քաղաքացի» անուամբ թ. 173 էն: [822]
- ՔՆԱՐ ԱՐԵՒԵԼԵԱՆ. Ամսաթերթ, Կ. Պոլիս 1857. 2-նիւ: [823]
- ՔՆԱՐ ՀԱՅՎԱԿԱՆ. Կիսամսեայ, Կ. Պոլիս 1861—1863, Ա.—Բ. շրջան: Պահա՝ 1861/62, թ. 11: — 1862/63, թ. 2, 6—: [824]
- ՔՆԱՐ ԱՐԱՐԱՏԵԱՆ. Կ. Պոլիս 1908, թ. 1 միայն: [825]
- ՔՆԱՐԻԿ (խմբատիպ). Վենետիկ 1908, թ. 1—4: [826]
- ՔՆՆԱՍԷՐ. Ստորհոլմ 1887, թ. 1—2: [827]
- ՕԳԳԱՊԱԶ. Շաբաթաթերթ (հայ.-գաղ.-յուն.-տաճկ.), Կ. Պոլիս 1908, թ. 1—3: [828]
- ՕՃԱՆԱՍՓՈԹԵԱՆ. Բուժբա (Պոմպէյ) 1840: 2-նիւ: [829]
- ՕՇԱԿԱՆ. Կիսամսեայ, Պարիս 1920/21, թ. 1—6: [830]
- ՕՍՄ. ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ. Ամսաթերթ, Կ. Պոլիս 1863, թ. 5—7, Պահա՝ թ. 1—4: [831]
- ՕՐԱԳԻՐ. Օրաթերթ, Կ. Պոլիս 1868, թ. 1—61: [832]
- Օրաթերթ, Կ. Պոլիս 1869—1878 (Ա.—Բ. տարի): — 1870, թ. 1 (152)—12 (163) կը կոչուի «Սէր»: — 1876, թ. 1714—1905 կը կոչուի «Նորագիր»: — 1877, թ. 1906 կը կոչուի «Նոր դար»: Պահա՝ 1870, թ. 218, 232, 290, 439—440, 446, 511: 1873, թ. 1131—1133, 1135—1139, 1141—1145, 1147—1149, 1151—

- 1155, 1157—1162, 1166—1168, 1170, 1183, 1185—1201, 1208—1211, 1241, 1247, 1251, 1255—1261, 1263—1268, 1270—1273, 1277—1279, 1281, 1283, 1289, 1316, 1320, 1327, 1336, 1343, 1345: — 1874, թ. 1369, 1380—1381, 1407, 1410, 1412, 1417, 1428, 1532—1573, 1575—1591: — 1875, թ. 1641—1642, 1645, 1647—1648, 1650—1672, 1674—1682, 1684—1688, 1691—1692, 1704, 1745, 1754, 1757, 1760, 1762, 1766, 1768, 1771, 1778—1782, 1785, 1787, 1791—1792, 1794—1805, 1827, 1831, 1839, 1841, 1844, 1847, 1852—1854, 1857—1858, 1862: — 1876, թ. 1889, 1893—1894, 1896—1898, 1900, 1911—1912, 1914, 1918—1920, 1924, 1950—1955, 1966, 1969, 1977, 1979, 2011, 2015, 2017, 2026—2027, 2050, 2063, 2070, 2087—2088, 2111, 2124, 2127, 2136, 2138—2139: — 1877, թ. 2153, 2204, 2207, 2213, 2217—2220, 2238—2239, 2245, 2247—2249, 2251, 2253—2256, 2259, 2261—2263, 2265, 2267—2272, 2274, 2280—: [833]

ՕՐԱԳԻՐ. Օրաթերթ, Կ. Պոլիս 1909, թ. 1—16: [834]

ՕՐԷՆՔ. Ամսաթերթ, Կ. Պոլիս 1921, Ա. տարի, թ. 1—3: [835]

— Շաբաթաթերթ, Աղեքսանդրիա 1905, թ. 1—13:

Պահա՝ թ. 7, 9, 10, 12: [836]

ՓՐՈՒ-ՓՐՈՒ. Շաբաթաթերթ, Կ. Պոլիս 1908—1909, թ. 1—18: Շարունակութիւն «Ջիկզակի»: [837]

ՓՕՆՈՎՐԱՓ. Տասնօրեայ, Կ. Պոլիս 1901, թ. 1—7: [838]

Յ Ա Ի Ե Լ Լ Ի Ք

ԱԶԱՏԱՄԱՐՏ. Օրաթերթ: Տփլիս 1920? 2-նիւ: [1]

ԱԼԻՔ. (Կովկաս). 1920: 2-նիւ: [2]

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՐՕՇԱԿ. Շաբաթաթերթ (Կովկաս) 1920? 2-նիւ: [3]

ԱՇԽԱՏԱՆՈՐ. Օրաթերթ, Տփլիս 1917—1920, ունիւր 1920, թ. 26 միայն: 2-նիւ: [4]

ԱՊԱՌԱԺ. Շաբաթաթերթ, Շուշի 1920? 2-նիւ: [5]

ԱՌՈՂՋ ԿԵԱՆՔ. Շաբաթաթերթ, Տփլիս 1920? 2-նիւ: [6]

ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԲԱՆՎՈՐ. Տփլիս 1921: 2-նիւ: [7]

ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԶԱՅՆԸ. Տփլիս 1921: 2-նիւ: [8]

ԱՐՇԱԼՈՅՍ. Շաբաթաթերթ, Թաւրիզ 1919, Բ. տարի, թ. 1—21: